

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1 2 6

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհուրդի
2015թ. ապրիլի 30-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Ա.Այվազյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական
խորհուրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է):

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2014-2015 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուլարյան:

2. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիա հայցորդ ձևակերպվելու համար ստացված դիմումի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիա իրավագիտության ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք և պետական կառավարում» մասնագիտության հայցորդ Վահե Հովիկի Սայադյանին թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

4. Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և ռեկտորի 2012 թվականի մայիսի 2-ի N 93

հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 126-Ա հրամանի հավելվածում կատարել լրացումներ կատարելու հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու
Գ.Հովհաննիսյան:

5. Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննությունների անցկացման կարգը հաստատելու մասին» N 127-Ա հրամանում փոփոխություններ կատարելու հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու
Գ.Հովհաննիսյան:

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2014-2015 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիֆուլարյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2014-2015 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիա հայցորդ ձևակերպվելու համար ստացված դիմումի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- Նաիրի Ժորայի Մնացականյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ՝ վճարովի հիմունքներով:
- Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք»

մասնագիտությամբ հայցորդ Նաիրի Ժորայի Մնացականյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Վերահսկողության գործառույթների իրականացման սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ իրավագիտության դոկտոր՝ Ռ.Հակոբյանին:

3. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիա իրավագիտության ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք և պետական կառավարում» մասնագիտության հայցորդ Վահե Հովիկի Սայադյանին թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Որոշեցին՝

իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Վահե Հովիկի Սայադյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Կրոնական կազմակերպությունների սահմանադրական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» փոխել «Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և ռեկտորի 2012 թվականի մայիսի 2-ի N 93 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 126-Ա հրամանի հավելվածում կատարել լրացումներ կատարելու հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և ռեկտորի 2012 թվականի մայիսի 2-ի N 93 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 126-Ա հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 9-րդ կետի «և վճարովի հիմունքներով» բառերից առաջ լրացնել «(բացի «Կառավարում (մասնագիտացումը՝ էլեկտրոնային հանրային կառավարում)» մասնագիտությունից)» բառերով».

2) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31-րդ ենթակետով.

«31) Կառավարում (մասնագիտացումը՝ էլեկտրոնային հանրային կառավարում).».

3) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21-րդ ենթակետով.

«21) «Կառավարում (մասնագիտացումը՝ էլեկտրոնային հանրային կառավարում)»՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» առարկայից.».

4) 33-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33.1-ին կետով.

«33.1. «Կառավարում (մասնագիտացումը՝ էլեկտրոնային հանրային կառավարում)» մասնագիտությամբ կարող են դիմել պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավագիտության, քաղաքագիտության, տնտեսագիտության, մենեջմենթի և բիզնեսի կառավարման, հանրային կառավարման, սոցիոլոգիայի, հաղորդակցության ու տեղեկատվության, ինֆորմատիկայի, տեղեկատվական ճարտարագիտության և էլեկտրոնային ճարտարագիտության մասնագիտություններով շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս):»:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննությունների անցկացման կարգը հաստատելու մասին» N 127-Ա հրամանում փոփոխություններ կատարելու հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննությունների անցկացման կարգը հաստատելու մասին» N 127-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

հրամանի հավելվածի 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«42. Բոլոր մասնագիտություններով դիմորդները քննություն են հանձնում օտար լեզվից («Հանրային կառավարում», «Իրավագիտություն», «Կառավարում (մասնագիտացումը՝ հանրային ֆինանսների կառավարում)», «Քաղաքագիտություն (մասնագիտացումը՝ քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն), «Հոգեբանություն (մասնագիտացումը՝ կառավարման հոգեբանություն)» մասնագիտություններով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն՝ դիմորդի ընտրությամբ, իսկ «Կառավարում (մասնագիտացումը՝ էլեկտրոնային հանրային կառավարում)» մասնագիտությամբ՝ անգլերեն):»:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար

Ա.Այվազյան

30 ապրիլի 2015թ.

Կ.Տ.